

ԱԼԵԿՍԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Մոսկովայում հրատարակվող «Журнал Московской патриархии» հանդեսում տպագրված է Ալեքսի Միտրոպոլիտի գեղուցումը, որ կրում է «Քրիստոնյայի պարտականությունը եկեղեցու և հայրենիքի հանդեպ հայրենական պատերազմի ժամանակաշրջանում» վերնագիրը: Կոչ անելով պաշարելու ազատասեր մարդկության և կուլտուրայի թշնամի գերմանական Ֆաշիզմի դեմ, Ալեքսի Միտրոպոլիտը գրում է.

«Երբորդ տարին է, որ մարտի դաշտում, թշնամու բազմամիլիոն բանակների վեմ անօրինակ քաջություն մարտնչում են մեր առաջնորդներն ու ռազմիկները և Աստուծո օգնությամբ տանում հաղթանակ հաղթանակի հետևից, ինչպես այդ տեսնում ենք առանձնապես վերջին տարիներս: Փառք և գոհություն Աստծուն, պատիվ և գովաբանություն մեր անպարտելի քաջարի կամիր Բանակին:

«Քրիստոնյայի մեջ, որը խորամուկ է լինում տեղի ունեցող իրադարձություններին, քրիստոնյա-հայրենասերների մեջ, որ իր հոգու բոլոր ուժերով ձգտում է ցուցաբերել իր մասնակցությունը հայրենիքի պաշտպանության գործին, կատարել իր պարտքը հանդեպ եկեղեցու և հայրենիքի և որն իր բոլոր մտքերն ու ցանկություններն ուղղում է թշնամու դեմ հաղթանակ տանելուն, ակամայից հարց է ծագում, թե ի՞նչ ձևով, ի՞նչ միջոցներով

լինքն անձամբ կարող է օժանդակել այդ ցանկալի հաղթանակին, ի՞նչպիսին պետք է լինի նրա վերաբերմունքը պատմության մեջ չտեսնված այս պատերազմի պայմաններում, հատկապես ո՞րտեղ և ի՞նչպես, քրիստոնյա-հայրենասերների վարքի բարոյական ի՞նչպիսի պայմաններում է դարձնվում հաղթանակը ռազմի դաշտում:

«Ուրեմն ո՞րտեղ և ի՞նչպես է դարձնվում հաղթանակը:

«Հարկավ, մեզ կասեն, այդ հարցերի պատասխանը պարզ է և բոլորին հասկանալի, որ հաղթանակը դարձնվում է ռազմի դաշտում ռազմիկների աշխատանքով, սրբաբազորություններով, ոգեվորությամբ, ղեկավարական պետերի հմտությամբ: Հաղթանակը, այնուհետև, կախված է նաև կռվի կատարելագործված գործիքներից, ինչպիսին են՝ օդային կործանիչները, դրահապատ զնացքները և տանկերը, զեն-դայերները, հրետանին, որն իր արկերով հասել է սոսկալի կործանիչ ուժի, նաև սնայակերական ղեկավարությունը, ահա թե ինչն է նախապատրաստում, պայմանավորում, ստեղծագործում հաղթանակը:

«Անհերքելի է, որ վերը նշած այս բոլորը հարկավոր են բանակի համար, ինչպես որ բանակը ինքը հարկավոր է, որ պեսղի լինի հաղթանակը:

«Բայց ընդունել հաղթանակի սոսկ այս միակ պատճառները և պայմանները, կնշանակեր ամբողջ ժողովրդին, բացի

րանակից, անդործության դատապարտել պատերազմի ժամանակ և նրան պահել տեղի ունեցող անցքերին անտարբեր դիտողի դերում: Ոչ, կան հաղթանակի բարոյական պայմաններ, որոնք շատ լայն են, շատ վեհ են, կարող եմ ասել, մինչև իսկ շատ ներգործոն են: Դրանք, այդ բարոյական պայմանները իշխում են նաև հաղթական զորականության վրա, որը կարիք ունի ոգեշնչման, որը պետք է պատրաստ լինի կրկնում ամեն բան, և ամեն տեսակ զոհարարություններ, զրկանքներ, վերքեր և նույնիսկ պատրաստ լինի մեռնելու: Այս բարոյական պայմանները հարկավոր են թիկունքում մնացած ժողովրդին, որը պատերազմից առաջ ծնել ու դաստիարակել է րանակին, պատերազմի ժամանակ էլ սնուցանում է նրան հոգեպես»:

Որո՞նք են այն պայմանները թիկունքում, որոնց առկայությունը նպաստում է մեր վեներելի հաջողությանը ռազմի դաշտում: Այդ հարցին պատասխանում է Ալեքսի Մխրթապուլիտը:

«... Ձենքի հաջողության այդպիսի բարոյական պայմաններ են հանդիսանում հավատը առ Աստված, որը օրհնում է արդարացի պատերազմը, դիտանկցությունը, թե արդար է այս մղվող պատերազմը, Աստծո և հայրենիքի առաջ ունեցած պարտքի զիտակցությունը:

«Հենց այդ է, որ թե ժողովրդի, թե զորքի մեջ ստեղծում է այն ճշմարիտ ոգևորությունը, որը կայուն հաղթանակի երաշխիքն է հանդիսանում, որովհետև այդ տրամադրությամբ ոգեշնչված ժողովուրդը պարտության մատնվել չի կարող: Այո, զորականների ոգևորությունը հենվում է ժողովրդի ոգևորության վրա և նրանից բխում: Զորականը պետք է իմանա, որ պատերազմը, որը մղում է նա, որը նրանից պահանջում է եռանդուն ջանք և բերում է այնքան վտանգ, ժողովրդական պատերազմ է, հայրենական պատերազմ է, որը համակում է բոլորին, փոքրից սկսած մինչև մեծը: Զորքի կապը ժողովրդի հետ,

դա նույնն է, ինչ արյան շրջանառությունը մարմնի մեջ, այդ շրջանառության դարումով կանգ է առնում ինքը կյանքը: Այդ կապը գոյություն ունի մեր մեջ և կարելի է ասել, նույնիսկ հզորանում է մեր հաղթանակների տեմպի աճման գույքին: Նայեցեք, որպիսի հայրենասիրական ոգևորություն, հայրենիքի սրբազան և բոցավառ սիրո ո՞րպիսի կրակ: Դա համայն ժողովրդի համերաշխությունն է ահեղ պատերազմի օրերին: Դա զոհարարություն է արյան, կյանքի, գույքի, աշխատանքի. դա ջերմ ցանկությունն է պատերազմը հաղթանակով պսակելու. դա սրտի դողդոջուն հեղձ է նոր հաղթանակի ամեն մի լուր լսելիս, դա խղճի լիակատար բավարարման զգացումն է, որ բխում է այն զիտակցությունից, թե մեր հայրենիքը մեր դաշնակիցների հետ միասին պայքարում է հանուն արդարության և իրավունքի ճշմարտ անարդարության և բիրտ ուժի», դա ժողովրդի և կառավարության միասնությունն է և զոհումը, դա թշնամու դեմ տանելիք մեր վերջնական հաղթանակի հաստատ համոզվածությունն է, միտահույնությունը մեր զորքի առաջնորդների փորձառության ու հոգևոր հզորության, մեր առաջնորդ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ հանճարի ուժին: Ի՞նչ է սա, եթե ոչ ժողովրդի ջերմ հայրենասիրական զգացմունքի վեհ օրինակ: Ժողովուրդը զգում է իր պարտականությունը հայրենիքի հանդեպ. նրա մեջ ապրում է այն գիտակցությունը, որ արդարացի է մեր մղած պատերազմը: Հավատացյալների մեջ նկատվում է կրոնական առանձին վերելք, որը ցույց է տալիս, թե ինչպես անխախտ է հավատի ուժը, թե որքան մեծ է հավատացյալ ժողովրդի կապը իր եկեղեցու հետ: Մերձավորների վերաբերմամբ սիրո ո՞րպիսի բարձր արտահայտություն ենք մենք տեսնում ամենուրեք: Ոմանք անվեհեր մեռնում են ռազմի դաշտում իրենց մերձավորների համար, հարազատ ժողովրդի համար, հարազատ հայրենիքի համար,

մյուսներն անտրտունջ կրում են պատե-
րադմի հարվածներն ու վերքերը, տենչում
վերստին դառնալ դեպի բանակ, վերստին
նետովել մարտի դաշտ, ոմանք ամեն ինչ
յոհաբերում են հիվանդների և վիրավոր-
ների համար, բոլոր իրենց ուժերը և մի-
ջոցները տրամադրում պատերադմի կարիք-
ներին...

«Ի՞նչ է սա, եթե ոչ, առ մերձավորն
ունեցած սիրո օրինակ; այն սիրո, որի
մասին ուսուցանում է Հովհաննես Աստ-
վածարան Առաքյալը, երբ ասում է.
«Որդեակդ, մի՛ բանիւք և լեզուօք սիրես-
ցուք, այլ արդեամբք և ճշմարտութեամբք»
(Յովհ. Ա. 18.)։ Եվ ըստ ամենայնի կա-
տարվում է Ավետարանի խոսքը, «Ով ու-
ղում է իր հոգին, իր կյանքը պաշտպանել,
նա կկորցնի այն, իսկ ով այն կկորցնի
կամավոր սխրագործությամբ հանուն
Գրիստոսի և Ավետարանի, հանուն սիրո
առ Աստուած և առ մերձավորները, կպահ-
պանի այն» (Մարկ. 35)։

«Մենք տեսնում ենք քրիստոնեական
այսպիսի սխրագործության և այսպիսի
սիրո անհամար օրինակներ։

«Ես առիթ եմ ունեցել լսելու մի սրբ-
տառուչ պատմություն մի երիտասարդ
աղջկա թաղման մասին, որը իբրև կա-
մավոր ռադիսակատ էր մեկնել պատե-
րադմի հենց սկզբից, երկու անգամ ծանր
վիրավորվել էր և երկու անգամ էլ, բուժ-
վելուց հետո, նորից վերադարձել ռադմա-
նակատ և ախտեղ, պատերադմի Յորդ տա-
րում, սպանվել ումբի պայթյունից։ Նրա
դադադի վրա դրված համեստ պապին ու-
ներ հակիրճ մակագրություն. «Անձկալի
թանկագին տառապալին, իր անմոռանալի
դուատը ՎԵՐԱՅԻՆ՝ վշտահար մորից»։
Որքա՞ն կսկիծ կա թաքնված այդ բառերի
մեջ։ Ո՞րքան վիշտ են պարունակում նր-
րանք։ Եվ մեր բոլոր մարտիկները, որոնք
ընկել են մարտի դաշտում, ունեն մայրեր,
կին, զավակներ կամ այլ մերձավորներ,
որոնք կատարում են այդօրինակ զոհաբե-
րություններ, զբոսնելով իրենց թանկագին,

իրենց մերձավոր էակներից ի սեր հայրե-
նիքի փրկության, և որոնք իրենց վիշտը
ցրում են ջերմևասնդ աղոթքով, դիմելով
աղոթքի սիրովիչ ուժին։ Այդ աղոթքի
մրմունջով, մեր ռադմիկների հիշատա-
կությամբ, հավերժ հիշատակ բարեմաշ-
թելով ռադմի դաշտում իրենց անձը զոհա-
բերողներին, մենք պայծառացնում ենք
մեր հաղթական բերկրանքը և դաժան պա-
տերադմի վախճանի ցնծությամբ նախա-
պատրաստում մեզ։ Սակայն հաղթանակը
բերում է ոչ միայն բերկրանքի գիտակե-
ցություն. նա բերում է և պետք է բերի
նաև պարտականության գիտակցություն,
մեզ վրա դրվող պարտքի գիտակցություն,
պատասխանատվության գիտակցություն
ներկայի և ապագայի համար, գիտակցու-
թյուն՝ թե անհրաժեշտ է աշխատել շատ
և երկար՝ ամրապնդելու համար հաղթա-
նակը, արգասավոր և արդյունավետ դարձ-
նելու այն։

«Եվ հասկանալի է դառնում, որ աշ-
խույժ և նույնիսկ բերկրալի տրամադրու-
թյան հետ միաժամանակ մենք մարդկանց
դեմքերին տեսնում ենք հոգսի դրոշմը,
տեսնում ենք նրանց մեջ գործարար տրա-
մադրություն. դա վկայում է, որ մարդիկ
դեռ ավարտած չեն համարում իրենց
սխրագործությունը, որ նրանց մեջ գոյու-
թյուն ունի սխրագործությունը շարունա-
կելու և ուժեղացնելու անհրաժեշտության
գիտակցությունը։

«Եվ իրոք, սուս մարդկանց ապշեցու-
ցիչ սխրագործությունները կարելի է տես-
նել անցյալ տարիների ընթացքում, Լե-
նինգրադում, որը պաշարված ու կտրված
էր երկրի կենսական ու ռադմական կենտ-
րոններից։ Լենինգրադը պաշարված էր,
սակայն ռադմիկ քաղաքը շարունակում էր
ապրել, պայքարել և անխոցելի կապ պահ-
պանել ողջ Մեծ երկրի հետ։ Լադոգա լճի
վրայով անցնում էին կենսամթերքով, ու
ռադմամթերքով բեռնավորված նավերն ու
բարժաները։ Ռադմանակատի դժի վրայով
սավառնում էին քաղաքացիական ու ռադմա-

կան օգնանալատորմերի ինքնաթիւները մըթերքով ու դենքով բեռնավորված: Իսկ երբ Լադոգա լիճը պատեց սառուցով, նրա սառցադաշտի վրայով անցկացվեց հուշակալոր ավտոմոբիլային մագիստրալը՝ հոյակապ կառուցվածքը, որի նմանը չի տեսել քաղաքացիական ու ռազմական շինարարութեան ողջ պատմութիւնը: Եւ այդ սառցային ճանապարհը դարձավ Լենինգրադը երկրի հետ կապող կենսական զարկերակը: Սառնամանիքների պահին, հրետանային զինակոծութեան, օդային ռաբակոծութեան տակ այդ տրասսով օգնութիւն էր տրվում պաշարված քաղաքին: Այդ ճանապարհի դործարկման ողջ ժամանակամիջոցում նրանով փոխադրվել են միլիոնավոր փութ բեռներ: Դա եղել է, արդարեւ, «կյանքի ճանապարհ»: Դա հանդիսացավ ուսումնական քաղաքի, հաստատակամութեան և անձնազոհ սխրագործութեան հոյակապ վիպերգութիւնը:

«Ուրեմն ի՞նչ: Ի՞նչ եղբայրացութիւն կարող է հանել հալածողալ ջրհատոյան այն բոլորից, որ մենք ասացինք ուս հայրենասերների բազմազան սխրագործութիւնների մասին մեր ապրած պատերազմի բորբոքուն ժամանակաշրջանում:

«Ո՞չ ապաքեն այն, որ հետագայում էլ մենք բոլորս պետք է անշեղորեն ընթա-

նանք նույն այդ ուղիով, այն էլ՝ սրբազան ոգևորութեան, սխրագործութեան, ազոթքի, աստվածային օգնութեան անսպառ ուժին՝ հալածող ընծայելու ուղիով, որովհետեւ միայն այդ ուղին է տանում դեպի հաղթանակ: Թող չհանգչի սրբազան հուրը: Թող նա առավել սաստկապես և առավել վառ բորբոքվի: Շատ առիթներ կան, որ ազգակ են հանդիսանում բարձր տրամադրութիւն ստեղծելու մեր հաղթանակին, կյանքի բոլոր կողմերը մաշող ֆաշիզմի դեմ պայքարելիք մեր հաղթանակին հալածող ընծայելու: Զէ՛ որ մեր աչքի առաջ տեղի ունեն ողջ աշխարհը ցնցող իրադարձութիւններ:

«Թող տերը օգնի, որ մենք առ միշտ պահպանենք այն համերաշխութիւնը, որ տիրում է մեր երկրում և թող այդ համերաշխութիւնն ու ոգևորութիւնը անուցանող բոլոր ազնիւ զգացումները և տրամադրութիւնները լուսավորվեն և սրբագործվեն սուրբ հալածող, նշխրածութեամբ Աստծուն և նախախնամութեամբ, Հալածողութեամբ մեր սուրբ եկեղեցու ավանդներին: Թող մեր հալածող սրտերում մշտապես ապրի ու վառ մնա Առաքելի խոսքը. «Այս է յաղթութիւնն, որ յաղթէ աշխարհի, հուսալք մեր» (Յովհ. Ե.):